Պատմություն և մշակույթ
History and Culture

2024 № 21 (2)

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.263

The Transformation of 44-Day War Landscapes of Memory: From Border Village to Regional Center

Gayane Hakobyan
https://orcid.org/0009-0009-0663-5377
Institute of Archaeology and Ethnography NAS RA
gayik20@gmail.com

Mihran Galstyan
https://orcid.org/0009-0009-1537-2847
Institute of Archaeology and Ethnography NAS RA
akoonk@yahoo.com

Keywords: Border settlements, regional center, 44-day war, memory landscape, memory policy, memorial, identity.

Monuments, as significant pieces of visible material culture, serve as primary sources of "storytelling" about the prevailing values, practices, ideas, political affiliations, and identity transformations within a society during a given period.

The paper examines the newly formed memory landscapes in the border settlements of the Republic of Armenia (RA) following the 44-day war, and the ways those landscapes transform moving from the border villages to the regional center. To address the main research question, we employed various data collection methods, including content and discourse analysis, expert and in-depth interviews, and unstructured observation. Using the example of Tavush region in RA, we illustrate which values and ideas prevail, and which identity narratives are preserved or reshaped when moving from the center of the region to the border settlements.

Based on the study results, it can be stated that the commemoration of the war in the regional center is private and scattered, and at the official level, they remain incomplete and still in the process. However, as one moves towards the border settlements (such as Sarigyugh and Sevkar), the commemoration practices become more communal and symbolic, also taking on a heroic manifestation. In the border settlements of Tavush region (Kirants and Acharkut), the memory landscape of the 44-day war becomes an important symbol of weapons, armed heroes, and fighting border guards.

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 263-274.

Received: 21.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 20.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

44-օրյա պատերազմի հիշողության լանդշաֆտների փոփոխությունները սահմանամերձ գյուղից դեպի մարզկենտրոն

Գայանե Հակոբյան
ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Միհրան Գալստյան
ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հիմնաբառեր՝ Սահմանամերձ բնակավայրեր, մարզկենտրոն, 44-օրյա պատերազմ, հիշողության լանդշաֆտ, հիշողության քաղաքականություն, հուշարձան, ինքնություն:

Հուշարձանները, հանդիսանալով կարևոր տեսանելի նյութական գործիք, ծառայում են որպես առաջնային աղբյուր՝ «պատմելով» տվյալ ժամանակաշրջանում հասարակության մեջ գերակշռող արժեքների, պրակտիկաների, գաղափարների, քաղաքական կողմնորոշումների, ինքնության ձևափոխումների մասին:

Հոդվածում քննարկվում է այն խնդիրը, թե ՀՀ սահմանային բնակավայրերում հիշողության ինչ նոր լանդշաֆտներ են ձևավորվել 44-օրյա պատերազմից հետո, և դրանք ինչպես են փոփոխվում սահմանամերձ գյուղից դեպի մարզկենտրոն: Հիմնախնդրի ուսումնասիրության համար օգտագործել ենք բովանդակային և դիսկուրս վերլուծության, փորձագիտական ու խորացված հարցազրույցների և ոչ կառուցվածքային դիտման մեթոդները: ՀՀ Տավուշի մարզի օրինակով ցույց ենք տալիս, թե մարզկենտրոնից դեպի սահմանային բնակավայրեր հեռանալիս ինչ արժեքներ ու գաղափարներ են գերակշռում, ինքնության ինչ նարատիվներ են պահպանվում կամ վերաձևավորվում:

Ելնելով ուսումնասիրության արդյունքներից՝ կարող ենք արձանագրել, որ եթե մարզկենտրոնում պատերազմի հիշատակումը անհատական է և ցրված, իսկ պաշտոնական մակարդակում ոչ ամբողջական է և դեռ անկատար, ապա դեպի սահման գնալիս (Սարիգյուղ, Սնքար բնակավայրերում) այն սկսում է առավել համայնքային ու խորհրդանշական դառնալ, նաև հերոսական դրսևորում ստանալ: Իսկ Տավուշի ամենասահմանամերձ բնակավայրերում (Կիրանց, Աճարկուտ) 44-օրյա պատերազմի հիշողության լանդշաֆտը դառնում է զենքի, զինված հերոսի ու պայքարող սահմանապահի կարևոր խորհրդանիշ:

Трансформация ландшафтов памяти 44-дневной войны: от приграничной деревни до областного центра

Гаяне Акопян

Институт археологии и этнографии НАН РА

Мигран Галстян

Институт археологии и этнографии НАН РА

Ключевые слова: Приграничные поселения, областной центр, 44-дневная война, ландшафт памяти, политика памяти, памятник, идентичность.

Памятники, как значимые элементы видимой материальной культуры, служат основными источниками повествования о преобладающих ценностях, практиках, идеях, политических взглядах и трансформациях идентичности в обществе в определенный период.

В статье рассматриваются сформированные после 44-дневной войны ландшафты памяти в приграничных населенных пунктах Республики Армения (РА), трансформация этих ландшафтов при перемещении из приграничных сел в областной центр. Для решения основного исследовательского вопроса мы использовали различные методы сбора данных, включая контент и дискурс-анализ, экспертные и глубинные интервью, а также неструктурированное наблюдение. На примере Тавушской области РА мы иллюстрируем, какие ценности и концепции преобладают, и какие нарративы идентичности сохраняются или переформируются при перемещении из центра провинции в приграничные населенные пункты.

По результатам исследования можно констатировать, что упоминания о войне в областном центре индивидуальны и разрозненны, а на официальном уровне остаются неполными и неточными. Однако по мере продвижения к приграничным населенным пунктам (таким как Саригюх и Севкар) эти упоминания становятся более общими и символическими, также приобретая героическое проявление. В большинстве приграничных населенных пунктов Тавуша (Киранц и Ачаркут) ландшафт памяти 44-дневной войны становится важным символом оружия, вооруженных героев и сражающихся пограничников.

* * *

Ներածություն: 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո ստեղծված բարդ իրավիճակում ինչպես հասարակական և քաղաքական տարբեր խմբերի, այնպես էլ գիտական հանրույթի առջև խնդիր է առաջացել՝ վերլուծել տեղի ունեցած իրադարձությունները, քննել դրանց դերը ազգային ինքնության ու պատմական հիշողության համակարգում: Նման կարևոր իրադարձությունների ուսումնասիրության, ազգային ինքնության ու պատկանելության, պատմական և կոլեկտիվ հիշողության կառուցման ու վերարտադրման համար կարևոր տեսանելի նյութական գործիք են հանդիսանում հուշարձանները, որոնք ծառայում են որպես առաջնային աղբյուրներ՝ «պատմելով» տվյալ ժամանակաշրջանում հասարակության մեջ գերակշռող արժեքների, պրակտիկաների, գաղափարների, քաղաքական կողմնորոշումների, ինքնության ձևափոխումների մասին:

Առօրյայում ազգային ինքնության կառուցման քաղաքականությունը կազմակերպվում է ինքնության խորհրդանշանների, պատկերագրությունների տարածման միջոցով [Osborne, 2001, 39-42]: Հետպատերազմական ժամանակաշրջանում նման քաղաքականությունն ավելի քան ակտուալ է դառնում: Ըստ Ա. Սմիթի՝ սոցիալական միջավայրերը և լանդշաֆտները դառնում են ազգայնականություն ձևավորող, երբ այդ միջավայրերում խտանալով շրջանառվում և

տեղադրվում են ինքնության նշաններ, խորհրդանշաններ և ծագման, հերոսականացման, սրբազնացման նարատիվներ: Այս միջավայրերը նույնականացվում են հանրույթի ինքնությունների հետ, և դրա նկատմամբ ձևավորվում է պատկանելության զգացողություն [Smith, 1991, 9]:

Հոդվածում քննարկվելու է այն խնդիրը, թե ՀՀ սահմանային բնակավայրերում հիշողության ինչ նոր լանդշաֆտներ են ձևավորվել 44-օրյա պատերազմից հետո, և դրանք ինչպես են փոփոխվում սահմանամերձ գյուղից դեպի մարզկենտրոն: ՀՀ Տավուշի մարզի օրինակով կպարզենք, թե մարզկենտրոնից դեպի սահմանային բնակավայրեր հեռանալիս ինչ արժեքներ ու գաղափարներ են գերակշռում, ինքնության ինչ նարատիվներ են կայուն պահպանվում, արդյոք կենտրոնին կամ սահմանին մոտ լինելը վերաիմաստավորում է ինքնության ընկալումները կամ ստեղծում տարբեր ինքնություններ:

Արցախյան երկրորդ պատերազմի հուշարձանացման հիմնախնդիրն ուսումնասիրել ենք ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Արարատի մարզերում և Երևան քաղաքում՝ 2021-2023 թթ.[1]: Հիմնախնդրի ուսումնասիրության համար կիրառել ենք բովանդակային և դիսկուրս վերլուծության, փորձագիտական ու խորացված հարցազրույցների և ոչ կառուց-վածքային դիտման մեթոդները: Բովանդակային և դիսկուրս վերլուծության միջոցով ուսումնասիրել ենք ԶԼՄ-ներում, համացանցում, պաշտոնական հարթակներում և բանավոր հիշողության մակարդակում ազգային ինքնության ու պատմական հիշողության բաղկացուցիչ տարրերի, հանրային գերակշռող պատումների ստեղծման, ամրապնդման և տարածման գործընթացները: Փորձագիտական հարցազրույցներն անցկացրել ենք հուշարձանային քաղաքականության իրականացման պատասխատուների և ՏԻՄ-երի ներկայացուցիչների հետ: Խորացված հարցազրույցներին մասնակցել են պատերազմում զոհված տղաների ծնողները/ընտանիքի անդամները, հուշարձանների տեղադրումը նախաձեռնող և իրականացնող անձինք և համայնքի բնակիչներ: Դիտման մեթոդը կիրառել ենք նշված բնակավայրերում հուշարձանային լանդշաֆտների և հիշատակման արարողությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Սույն հոդվածում կօգտագործենք միայն ՀՀ Տավուշի մարզի մարզկենտրոն Իջևանում և դեպի հայ-ադրբեջանական սահման գնացող Աչաջուր, Սևքար, Սարիգյուղ, Աճարկուտ, Կիրանց գյուղական բնակավայրերում հավաքված հետազոտական նյութերը:

2020 թ. 44-օրյա պատերազմից կարճ ժամանակ անց համայնքային իշխանությունները, զոհվածների հարազատները, ընկերները, բարերարները և այլ անձինք հանդես եկան զոհվածների հիշատակի հավերժացմանն ուղղված բազմաթիվ նախաձեռնություններով: Ուսումնասիրության ենթարկված համայնքներում ևս եզակի չէին նման դեպքերը: Սակայն հուշարձանային լանդշաֆտի

[1] Ուսումնասիրությունն իրականացրել ենք «Պատմություն և հիշողություն. Արցախյան երկրորդ պատերազմի հուշարձանացման հիմնախնդիրը և հեռանկարի ուրվագծումը» (ծածկագիր՝ 21T-6A136) ծրագրի շրջանակներում՝ ԲԿԳԿ-ի ֆինանսական աջակցությամբ:

ձևավորման որոշակի ընդհանրություններին զուգահեռ՝ այս համայնքներից յուրաքանչյուրն ունի տեղանքի մշակութայնացման սեփական մեխանիզմներն ու նարատիվները:

Հուշարձանային լանդշաֆտի (չ)ձևավորումն Իջևան քաղաքում: 2020 թ. պատերազմից հետո Իջևան քաղաքի հուշարձանային համալիրում առանցքային դեր կատարող հուշարձաններ չեն տեղադրվել: Մարզային և/կամ քաղաքային մակարդակով նմանատիպ ծրագրեր չեն նախաձեռնվել՝ համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, ինչի մասին նշեց փորձագետը մեզ հետ հարցազրույցի ժամանակ. *«մարզպետարանը չի կարող նման ծրագիր նախաձեռնել, համապատասխան միջոցներ չունի»* [հարցազրույց Տավուշի մարզպետարանի ՏԻ հարցերով վարչության պետի հետ, ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022-2023 թթ.]: Միևնույն ժամանակ, Իջևանում՝ «Մայր Հայաստան» հուշարձանի տարածքում, որը գտնվում է քաղաքից դուրս եկող ճանապարհին՝ բարձունքի վրա, նախատեսում էին մարզի բոլոր զոհվածների հիշատակը հավերժացնող պուրակ կառուցել, սակայն, ինչպես պարզեցինք մեր հաջորդ այցի ժամանակ՝ մեկ տարի անց, այդ ուղղությամբ աշխատանքներ չէին կատարվել: Այս գործընթացի հապաղման վրա միգուցե ազդել է նաև պաշտոնական մակարդակում տեղի ունեցած այն քննարկումը, որ հանրապետության բոլոր բնակավայրերում տեղադրվող՝ 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշարձանները միատեսակ լինեն, որը, սակայն, չի վերածվում հիշողության մշակված և գործող պետական քաղաքականության: Ընդհանրապես, պատերազմի հիշողության դեպքում գործ ունենք հիշողության քաղաքականության հետ [Connerton, 1989, 121]. այս դեպքում հիշողությունն առավել սուր քաղաքական համատեքստ է ստանում: Հետազոտության շրջանակներում մեր խնդիրն էր հետևել նաև հիշողություն ձևավորող սուբյեկտների՝ հանրային ու քաղաքական տարբեր խմբերի և անհատների գործունեությանը և խոսույթին, ինչը կներկայացնենք հոդվածում:

Քաղաքում չկար նաև զինվորական պանթեոն, որտեղ կամփոփվեին զոհվածների շիրիմները, և որը 44-օրյա պատերազմը հիշատակող ընդհանուր խորհրդանիշ կդառնար ու համայնքի բնակիչների համար ընդհանրական հուշարձանի դեր կկատարեր: Գիտենք, որ ՀՀ շատ բնակավայրերում դեռևս Արցախյան 1-ին պատերազմից կան պանթեոններ, իսկ որոշ քաղաքներում/գյուղերում այն կառուցվել է 44-օրյա պատերազմից հետո՝ որպես պատերազմի հիշատակման պաշտոնական խորհրդանիշ, իսկ Իջևանում մեզ այսպես հիմնավորեցին պանթեոնի բացակայությունը. *«եթե ուզենանք առանձին պանթեոն սարքել, չեն թողնի»* [հարցազրույց Տավուշի մարզպետարանի ՏԻ հարցերով վարչության պետի հետ, ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022-2023 թթ.]: Միակ պաշտոնական նախագիծը Իջևանում, որի մասին նշեցինք վերևում, պատերազմի ավարտից արդեն մոտ չորս տարի անց դեռևս իրականացված չէ:

Ուսումնասիրության ընթացքում Իջևան քաղաքում հուշարձանի քիչ թվով տեսակների հանդիպեցինք, որոնք հիմնականում անհատական նախաձեռնությունների շնորհիվ էին տեղադրվել: Դրանցից էր ցայտաղբյուրը՝ տեղադրված բնակելի շենքերից մեկի բակում՝ նվիրված նույն շենքում ապրող ընկերոջը, և բնակելի ու հանրային նշանակության շենքերի պատերին զոհվածների դիմանկարների պատկերումն ու հուշատախտակների/հուշանկարների տեղադրումը: Անհատական մակարդակով իրականացված այս միջոցառումները հարազատի, ընկերոջ, համաքաղաքացու հիշատակն ինչ-որ ձևով հավերժացնելու խորհուրդ ունեին իրենց մեջ և ոչ ավելին:

Ի տարբերություն սրանց, այլ խորհուրդ ունեն կրթական հաստատությունների կողմից իրականացված նախաձեռնությունները՝ սերունդների հիշողության մեջ թողնել հայրենիքի համար կյանքը զոհած տղաների հիշատակը՝ դրանով հայրենասիրություն սերմանելով նրանց մեջ: Այդ նպատակով պատերազմի ավարտից ուղիղ մեկ տարի անց Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցի բակում բացվում է խաչքար՝ նվիրված 44-օրյա պատերազմին մասնակցած ու զոհված 8 շրջանավարտների հիշատակին (Մեզ բացակա չդնեք. անմահացած տղաներին նվիրված խաչքարի բացում Իջևանի թիվ 5 դպրոցի բակում):

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ևս նմանատիպ նախաձեռնությամբ է հանդես գալիս՝ զոհված համալսարանականներին նվիրված խաչքար տեղադրելու բակում, սակայն ֆինանսական խնդիրների պատճառով այն իրականություն չի դառնում: Դրա փոխարեն որոշում է կայացվում քիչ ֆինանսական ռեսուրսներ պահանջող միջոցառում իրականացնել՝ հուշատախտակ պատրաստել և փակցնել համալսարանի շենքի արտաքին պատին, որը ևս մեր ուսումնասիրության ժամանակահատվածում դեռևս չիրականացված ծրագիր էր մնում: Համալսարանում իրականացված միակ նախաձեռնությունը՝ զոհված տղաներից միայն մեկի անվան լսարանի անվանակոչումը, իրենց լավագույն ուսանողի առաջ պարտքը կատարելու, նրա հիշատակը հավերժացնելու խորհուրդն ուներ, որը համալսարանի ղեկավարության և ուսանողության համատեղ ծրագիրն էր. *«Բոլորի անունով չէինք կարող լսարան անվանակոչել. ինքը ՈՒԳՀ ղեկավարն էր, շատ լավ ուսանող էր, գրող, ստեղծագործող մարդ էր, իսկական համալսարանական էր, այսպես ասեմ»* (հարցազրույց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի հետ, ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022-2023 թթ.]:

Աչաջուր գյուղը 44-օրյա պատերազմից հետո: Իջևանից դեպի գյուղական բնակավայրեր հեռանալիս ոչ միայն փոխվում են հուշարձանային լանդշաֆտները, այլ նաև այն ձևավորող սուբյեկտները: Միակ որդուն կորցրած ծնողներն իրենց վիշտը սփոփում են որդու երազանքը կատարելու միջոցով՝ գյուղի կենտրոնից դեպի զոհվածի տան ճանապարհի միջնամասում հենց պատերազմի հաջորդ տարին եկեղեցու կառուցման հիմքերը դնելով. *«միշտ ուզում էր գյուղում եկեղեցի լինի ու քաղաքում տուն ունենա»* [մեջբերում զոհվածի մոր հետ հարցազրույցից, ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022-2023 թթ.]: Այս մեծ նախաձեռնությունն իրականություն է դառնում արդեն 2023 թ.՝ Խաչի երևման տոնին օծելով եկեղեցու գմբեթի խաչը և զանգը (Արցախյան պատերազմի բոլոր հերոսների հիշատակը հավերժացնող եկեղեցի Աչաջուրի սրտում, օծվեց խաչը և զանգը): Ծնողները սրանով հավերժացնում են իրենց որդու հիշատակը[1], միաժամանակ կատարում նրա երազանքներից մեկը, դրանով մխիթարում իրենց և վերջում՝ սեփական նախաձեռնությամբ կառուցած եկեղեցին նվիրում Արցախյան պատերազմի բոլոր հերոսների հիշատակին: Ընտանիքը եկեղեցուն հարող տարածքը ևս մտադիր է օգտագործել՝ վերածելով անվանական այգու, որտեղ տնկվող ծառերը կխորհրդանշեն հայ ժողովրդի կյանքի շարունակությունը, ինչի համար իրենց

[1] Մոր խոսքերն են եկեղեցու օծման առիթով՝ «Շիրակս, սա նվազագույնն էր, ինչ կարող էինք անել քո սուրբ նահատակությունից հետո հավերժացած անունդ եկող սերունդներին փոխանցելու և լուսավոր կյանքիդ մասին պատմելու համար», տե՛ս https://www.facebook.com/tahuys/videos/221091073962886/

որդին կյանքը նվիրել է՝ հանուն հայրենիքի: Այս միջոցառումն իրականություն է դառնում զոհվածի ընտանիքի բոլոր անդամների ջանքերի և նվիրումի շնորհիվ՝ օգտագործելով նախ պետության միանվագ աջակցության գումարները, ապա՝ ընտանեկան ֆինանսական միջոցները: Նրանք ընթացքում չեն մերժում նաև որոշ մասնավոր աջակցություններ (տարածքի մի մասը անհատույց տվել է համագյուղացին, մի մասը՝ համայնքը, խաչքարը՝ Տավուշի թեմի հոգևոր առաջնորդը, եկեղեցու գմբեթի խաչը՝ 44-օրյա պատերազմի մասնակից տղաներից մեկը, զանգը՝ բարեկամուհին և այլն): Նույն զոհվածի հիշատակին՝ որպես ծննդյան նվեր, բարեկամուհու կողմից գրաֆիտի է պատկերվում նաև գյուղի կենտրոնական հատվածում՝ վարչական շենքի հարևանությամբ:

Աչաջուր գյուղի վարչական ղեկավարը ևս իր պարտքն է համարում զոհված տղաների հիշատակը հավերժացնել՝ գյուղի կենտրոնական մասում նրանց դիմանկարները պատկերելով, որտեղ դեռևս 90-ականներից տեղադրված էր նաև խաչքար՝ «Ի հիշատակ Արցախյան պատերազմում ընկած հերոսների» գրությամբ:

44-օրյա պատերազմի հուշարձանացումը Սևքար գյուղում: Սևքար գյուղում հուշարձանի տեղադրման վայրը, ըստ էության, չի փոխվում. այն գյուղի կենտրոնական մասում է, որի չորս կողմում հանրային նշանակության շենքեր են՝ մշակույթի տունը, երաժշտական դպրոցը, փոստատունը, գյուղի վարչական շենքը: Այս դեպքում փոխվում են հուշարձանի տեղադրման գաղափարն ու դերակատարը, և որ ամենակարևորն է՝ ակնհայտ տարանջատում է դրվում հերոս-շարքային հասկացությունների միջև: Հուշարձանի տեղադրումը նախաձեռնում և իրականացնում է վարչական ղեկավարը (նախկինում՝ գյուղապետ) համայնքային միջոցներով՝ ավագանու համաձայնությամբ (Հուշարձան՝ Ազգային հերոս Թաթուլ Ղազարյանի և սևքարեցի հերոսների հիշատակին): Հուշարձանի տեսակը կրկին որոշվում է համայնքային իշխանությունների մակարդակով, և 20-րդ դարի հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի Սևքարեցի Սաքոյի և Երևանյան գնդի (1877-1878 թթ. պատերազմում) հրամանատարներից մեկի՝ փոխգնդապետ Վարշամովի կիսանդրիների կողքին տեղադրվում են 44-օրյա պատերազմում զոհված ՀՀ Ազգային հերոս գնդապետ Թաթուլ Ղազարյանի և փոխգնդապետ Արթուր Հովսեփյանի կիսանդրիները: Նոր տեղադրված կիսանդրիների մեջտեղում խաչքար է՝ «Խոնարհումս 2020 թ. 44-օրյա պատերազմում զոհված (անուն ազգանունները) հիշատակին» գրությամբ: Հուշարձանի բացմանը, բացի քաղաքական գործիչներից, հրավիրվում են նաև ռազմական ղեկավարության ներկայացուցիչներ: Զոհվածների հիշատակի հավերժացման այս տարբերակված մոտեցումը վառ օրինակն է այն բանի, ինչը կոչվում է հիշողության քաղաքականություն, քանզի հիշողությունը ձևավորող քաղաքական սուբյեկտների, այս դեպքում՝ համայնքային իշխանությունների գործունեությունից է կախված, թե սերունդներն ինչպես կհիշեն նույն պատերազմում նահատակված տղաներին՝ որպես հայրենիքի պաշտպանության համար կյանքը զոհած հերոսնե՞ր, թե՞ պատերազմի «պատահական» զոհեր: Եվ հիշողության՝ համայնքային մակարդակով տարվող այս և նմանօրինակ քաղաքականությունն իր դրսևորումը չէր/չի ստանա, եթե առկա լիներ/լինի և գործեր/գործի պատերազմի հիշողության պետական քաղաքականություն:

Համայնքային իշխանությունների կողմից շարքային ծառայողների հիշատակը նման ձևով «հավերժացնելը» չեն ընդունում ոչ միայն նրանց ընտանիքները, այլ նաև շատ համագյուղացիներ. *«Նույնիսկ չեզոք մարդիկ, հեռու մարդիկ են վիրավորվել, որ հուշարձանն էդպես է տեղադրվել: Մարդը մնում է մարդ, զոհը մնում է զոհ: Նա ռուս չի, նա՝ թուրք, ազգային հերոսներին տարբերու՞մ*

են իրարից՝ 18 տարեկան լինի, 40, թե 42, դա ի՞նչ նշանակություն ունի: Համագյուղացիներից շատերն են վիրավորվել, մենակ մենք չենք: Արձանը ոչինչ չի նշանակում, բայց մեկին բարձրացնե՞ն, մեկին էլ իջացնե՞ն, դա չի՛ կարելի, նույն ազգի մարդ են» [հարցազրույց զոհվածի մոր հետ, ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022-2023 թթ.]:

Բացի այն, որ չեն ընդունում, այլև փորձ են արել ազդել հիշողության՝ վերևից եկող քաղաքականության վրա, սակայն, ապարդյուն: Մեջբերենք զոհվածի կնոջ հետ հարցազրույցից մի հատված. *«Չեմ հասկանում՝ ով է որոշել, բայց ես դեմ էի, որ տարբերակում դնեն: Էս դեպքում բոլորն էլ իրենց ամենաթանկն են տվել՝ կյանքը: Վերջին պահին որ տարբերակում են, դա, իհարկե, սխալ է: Որ լսեցինք, թե երկուսի արձանն են դնելու, մեր ընտանիքն ու մյուս շարքային զինվորի հայրը ասացինք, որ եթե գումարի հարցն է, մենք պատրաստ ենք մեր գումարը տրամադրենք, ինչ անում եք, հավասար արեք: Բայց չարեցին: Վերջում միջոցառում արեցին, Զինուժից եկան, նկարեցին: Ու մեկնաբանումն էնպես էր, որ ունեն զոհեր, ու անընդհատ շեշտվում էր էդ երկուսի անունը: Վերջում ոնց որ զոռով ասում են՝ դե, գյուղում էլի կան զոհեր ու երկուսի անունն են տալիս»* [հարցազրույց զոհվածի կնոջ հետ, ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022-2023 թթ.]:

Գյուղի մշակույթի տան պատին արված գրաֆիտիներում ևս ակնառու կերպով առանձնացված են կոչումով բարձր զինվորականները շարքային զինծառայողներից: Ինչպես համայնքային աշխատողը նշեց՝ *«այս նկարներն անհատ էրեխեք են արել՝ իրենց ընկերների հիշատակին»* [ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022-2023 թթ.]: Դաշտային աշխատանքների ընթացքում չկարողացանք կապ հաստատել նկարչի հետ՝ պարզելու համար արդյո՞ք այն պատահականություն է, թե՞ ներքևից եկող անհատական նախաձեռնությունը համապատասխանեցրել են հիշողության՝ վերևից եկող քաղաքականությանը: Դեպքերի մեծամասնությունում գրաֆիտիները չեն պատվիրվում ընտանիքների կողմից, այլ նախաձեռնում և իրականություն են դարձնում ընկերները: Այս դեպքում ևս նախաձեռնությունը զոհվածներից մեկի ընկերոջն էր, սակայն հուշարձանացման այդ ձևը նախընտրել էր նվիրել գյուղի բոլոր զոհվածների հիշատակին:

Նոր Սփյուռքը՝ որպես հուշարձանացման դերակատար Սարիգյուղ գյուղում: Սարիգյուղ գյուղում հուշարձանային լանդշաֆտի ձևավորման դերակատարը գյուղի նախկին բնակիչներից է, այժմ ռուսաստանաբնակ, ով նախաձեռնել և գյուղում արդեն առկա հուշարձանի (Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված) տարածքը բարեկարգելով, որը գտնվում էր գյուղի կենտրոնում՝ վարչական շենքի դիմաց, տեղադրել է Հայրենական մեծ, Արցախյան 1-ին և 2-րդ պատերազմներում զոհված սարիգյուղցիների հիշատակին նվիրված հուշաքարեր՝ նրանց անուններով (Ի հիշատակ սարիգյուղցիների, ի պատիվ սարիգյուղցի նահատակ հերոս տղերքի): Ըստ նրա՝ հուշարձանի հիմնական խորհուրդը բոլոր ժամանակների զոհվածների անունները սերունդների հիշողության մեջ դրոշմելն է: Իր անունը՝ որպես տեղադրողի, ևս թողել է հուշաքարի վրա:

Հուշարձանի բացման արարողության ժամանակ վարչական ղեկավարի խոսքում և դպրոցական միջոցառման տեքստերում ևս շեշտվում էր հայրենիքի, ավելի կոնկրետ գյուղի՝

որպես սահմանամերձ բնակավայրի պաշտպանության համար կյանքը նվիրած նահատակների մասին:

Աճարկուտ գյուղի հուշարձանային համալիրը և զոհվածի կիսանդրին: Աճարկուտ գյուղում հուշարձանային համալիրի կառուցման հիմքում զոհվածին հերոսացնելն է, նրան սրբազնացնելը, միևնույն ժամանակ, գյուղի երեխաներին հայրենասիրության ոգով դաստիարակելը՝ նրանց հնարավորություն տալով ամեն օր հերոսի հետ լինելու (Ձեզ բացակա չենք դնի): Համայնքապետը, որը զոհվածի ընտանիքի բարեկամն էր, նախաձեռնում և իրականացնում է հուշարձանի կառուցումը, սակայն ոչ միայն համայնքային միջոցներով, այլ նաև՝ ընտանեկան, և առաջին հերթին ծախսվում են զոհվածներին տրվող պետական միանվագ աջակցության միջոցները: Հուշահամալիրի կառուցմանն աջակցում է նաև "Focus on children now" միջազգային կազմակերպությունը, որի միջոցով բարեկարգվում է տարածքը, վերածվում խաղահրապարակի և նվիրվում Աճարկուտ գյուղի երեխաներին՝ ի հիշատակ հերոս Դավիթ Շահնազարյանի: Մեջբերենք համայնքապետի հետ հարցազրույցից մի հատված. *«ՀԿ-ի հետ կազմակերպել, էս խաղահրապարակն ենք դրել՝ այն նպատակով, որ երեխաները խաղան, շփվեն, ուրախանան, Նոր տարի անեն էստեղ: Ամեն ինչ կազմակերպելու ենք, որ իրանց հերոսի հետ լինեն, որ մեր հերոսները մեր երեխաների հետ ապրեն»* [ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022-2023 թթ.]: Այս միտքը կարևոր խորհուրդ ունի իր մեջ՝ ուղղված երեխաներին: Աճարկուտ գյուղը սահմանամերձ է, շատ փոքր հեռավորության վրա գտնվում է հակառակորդը, որի հարձակումներից գյուղը/հայրենիքը պետք է պաշտպանեն նաև այսօրվա երեխաները, որոնք վաղը զինվոր են դառնալու: Փաստորեն, գյուղի տարածքը, նրա՝ ազգայնականություն ձևավորող հուշարձանային լանդշաֆտը մեծերի կողմից ներկայացվում է որպես ինքնության ձևավորման/ամրապնդման կարևոր գործոն երեխաների համար:

Հուշարձանային համալիրում կարևոր դեր ունի զոհվածի կիսանդրին, որը, ըստ տեղադրողների և համագյուղացիների, խորհրդանշում է պատերազմի բոլոր զոհերին. *«Յուրաքանչյուր անցորդ թող իր մեջ ընկալի բոլոր զոհերի կերպարը, սա է եղել կիսանդրու իմաստը: Սա զինվորի սիմվոլն է. յուրաքանչյուրի կերպարը մարմնավորված է այս կիսանդրու մեջ»* (մեջբերում Աճարկուտ գյուղի բնակչի խոսքերից (Աճարկուտն իր գիրկն ընդունեց հերոսացած հայորդուն)): Զինվորի ձեռքին զենք կա, իսկ հուշաքարի վրա արված գրությունը («Մտքումս՝ պայքար, սրտումս՝ հայրենիք») դառնում է հայրենիքի համար անվերջ պայքարելու նարատիվը ապագա սերունդների համար:

Չնայած զոհվածի ընտանիքի համար կարևոր է այս գաղափարը, հուշարձանի միջոցով գյուղի երեխաների մեջ հայրենասիրության սերմանումն ու ազգային ինքնության զարգացումը, այնուամենայնիվ, հատկապես մայրը չի ընդունում հուշարձանի տեսակը: Հուշահամալիրը կառուցված է զոհվածի տան մոտակայքում, այնպես, որ տան բակից ու պատուհաններից երևում է արդեն սրբություն դարձած տարածքը, որը երբեմն սփոփում, երբեմն էլ ցավ է պատճառում հարազատներին: Մեջբերենք զոհվածի մոր հետ հարցազրույցից մի հատված. *«Ինձ համար ավելի հանգիստ կլիներ, որ թեկուզ մի հատ խաչ տեղադրվեր, կամ, չգիտեմ, սենց չլիներ: Մենց շատ դժվար է, երբ քար ես տեսնում: Բայց, երբ գիշերները վատ եմ զգում, հարևանուհուս զանգում եմ, իրար հետ իջնում ենք, չգիտեմ, որոշակի հանգստանում եմ, երբ իրա հետ խոսում եմ»* [հարցազրույց զոհվածի մոր հետ, ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022-2023 թթ.]:

Կիրանց գյուղի հուշարձանային լանդշաֆտի վերաձևավորումը 44-օրյա պատերազմից հետո: Ապագա սերունդների դաստիարակության խորհուրդ ունի նաև Կիրանց գյուղում դեռևս Հայրենական Մեծ պատերազմից հետո ձևավորված հուշարձանային լանդշաֆտը, որը վերաձևավորվում է Արցախյան 1-ին և 44-օրյա պատերազմներից հետո: Արցախյան 1-ին պատերազմից հետո տեղադրված հուշարձանի տարածքում, որի մոտակայքում եկեղեցին էր, գյուղի վարչական ղեկավարը նախաձեռնում և տեղադրում է նաև վերջին պատերազմում զոհված տղաների հուշաքարերը և նույն միջազգային կազմակերպության (“Focus on children now”) օժանդակությամբ կառուցում մանկական խաղահրապարակ. *«Մանկական խաղահրապարակն էլ էստեղ եմ դրել, որ երեխաներն անընդհատ շփվեն հերոսների հետ: Կարայի առանձին տեղ դնեի, բայց նպատակս էդ էր՝ եկեղեցին կա, հուշարձանը կա, խաղահրապարակը կա: Գալիս են մարդիկ: Հա, պարտադիր, մանավանդ իրիկունները, երբ հովն ընկնում է, երեխաները ստեղ են գալիս»* [հարցազրույց վարչական ղեկավարի հետ, ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022-2023 թթ.]: Ինչպես Աճարկուտ գյուղի դեպքում, այնպես էլ այստեղ տարածքը դառնում է գյուղի կարևոր միջոցառումների անցկացման վայր, որը համախմբում է գյուղի բնակիչներին՝ նրանց մեջ զարգացնելով համայնքային և միաժամանակ ամրապնդելով ազգային ինքնության գաղափարները: Օսբորնեն գտնում էր, որ ինքնության և որպես ինքնություն իմաստավորվող տարածքների միջև փոխկապվածությունը կառուցվում է լանդշաֆտի, հուշարձանների միջոցով, որտեղ անցկացվում են հիշատակի արարողություններ կամ տոնական ծեսեր, և որոնք նպաստում են համայնքային հիշողության ամրապնդմանն ու ազգային պատկանելության ընկալման ձևավորմանը: Այս տարածքները դառնում են պատմական նարատիվներ կրողներ, հանրային արժեքներ արտահայտողներ և հուսալի ապագայի կառուցման մասին գաղափարներ արտադրողներ [Osborne, 2001, 42-47]: Թերևս այս նպատակին է ուղղված Կիրանց գյուղի տոնը՝ օգոստոսի 1-ը, ամեն տարի հուշարձանի տարածքում անցկացնելու պրակտիկան: *«Հուշարձանի կառուցումից հետո ամեն տարի օգոստոսը 1-ը նշում ենք՝ որպես գյուղի օր: Իհարկե, գյուղի օրը նշում ենք՝ մեր զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնելու նպատակով: Այս միջոցառումն ունի դաստիարակչական նշանակություն, քանի որ ամեն տարի մեր աշակերտները մասնակցում են, և կարևոր է սա: Եթե մեր աշակերտների մասնակցությունը մենք չապահովենք էս կարևոր գործին, հետագայում չենք կարող ունենալ մեր երազած, դաստիարակված սերունդը»* (մեջբերում Կիրանց գյուղի հիմնական դպրոցի ուսուցչի խոսքերից (Կիրանց համայնքում նշվել է գյուղի օրը)): Այսպիսով, տարածքի միջոցով ազգայինի կազմակերպումը պարտադիր ենթադրում է նման տոնական ծեսերի անցկացում, իսկ նրանցում օգտագործված տեքստերն ուղղվում են աշակերտներին՝ որպես իրենց ազգային ինքնության շարունակականության կրողների:

Եզրակացություններ: Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք ասել, որ ՀՀ Տավուշի մարզում կենտրոնից դեպի սահմանամերձ բնակավայրեր հեռանալիս ոչ միայն փոխվում են հուշարձանային լանդշաֆտները, հիշողության ձևավորման սուբյեկտները, այլ նաև հուշարձանների կառուցման հիմքում դրված արժեքներն ու գաղափարները, ինքնության ընկալումներն ու նարատիվները:

Կարող ենք արձանագրել, որ Իջևան քաղաքում համայնքային մակարդակում հուշարձանային լանդշաֆտի ձևավորման՝ դեռևս միայն քննարկված նախաձեռնություն է առկա, որը չի առնչվում կոնկրետ անունների, այլ ուղղված է, ընդհանուր առմամբ, 44-օրյա պատերազմի մասին հիշողության ձևավորմանը, և իր վրա կրում է հիշատակման՝ վերջին շրջանում տարածված ձևերի ազդեցությունը: Կառուցվելու պարագայում քննարկված/նախագծված հիշողության պուրակը կդառնա հիշողության քաղաքականության դրսևորումը համայնքային մակարդակով: Այս քաղաքի դեպքում հիշողության լանդշաֆտի ձևավորման գործառույթն ինչ-որ չափով «իրենց վրա վերցրել են» կրթական հաստատություններն ու անհատները: Դպրոցի/համալսարանի տարածքը դառնում է ազգային ինքնության ձևավորման/ամրապնդման միակ միջոցներից մեկը, իսկ իրականացված անհատական նախաձեռնությունների նպատակը թերևս զոհված ընկերների և համաքաղաքացիների հիշատակը վառ պահելն է և ոչ ավելին:

Մարզկենտրոնին համեմատաբար մոտ գտնվող Աչաջուր գյուղում հիշողության լանդշաֆտի ձևավորումը վկայում է հուշարձանների նոր ձևերի (եկեղեցի, գրաֆիտի) տարածման, միևնույն ժամանակ, պետական քաղաքականության բացակայության պայմաններում ընտանեկան/անհատական նախաձեռնությունների հաջող իրականացման և այլընտրանքային պատումների (զոհվածի երազանքի իրագործում) ձևավորման ու կենսունակության մասին:

Ավելի հեռանալով դեպի սահմանային բնակավայրեր՝ ականատես ենք լինում պատերազմի հիշատակման այլ պրակտիկաների և նարատիվների: Այսպես, Սնքար գյուղում համայնքային իշխանությունը՝ որպես հուշարձանային տարածքի ձևավորման կարևոր սուբյեկտ, շարունակում և զարգացնում է հերոսական լանդշաֆտի գաղափարը՝ հերոսականություն խորհրդանշող հուշարձանը տեղադրելով գյուղի մարդաշատ վայրում և այն ներկայացնելով որպես նարատիվ և ուղղորդված տեքստ դեպի հանրությունը:

Սարիգյուղ գյուղում 44-օրյա պատերազմից հետո տեղադրված հուշարձանն իր վրա կրում է խորհրդային և հետխորհրդային շրջանի բոլոր պատերազմների հուշարձանային լանդշաֆտի գործառույթները: Գյուղում առկա՝ ազգային ինքնությունը խորհրդանշող հուշարձանային տարածքը վերաձևավորվում է հայկական սփյուռքի նախաձեռնությամբ և օժանդակությամբ, իհարկե, համայնքային իշխանության կիրառած քաղաքականության շնորհիվ:

Աճարկուտ և Կիրանց բնակավայրերում հուշարձանային լանդշաֆտի ձևավորման դերակատարները՝ համայնքային իշխանությունները, նախաձեռնում և ստեղծում/վերստեղծում են ազգայինը ներկայացնող միջավայր: Ձևավորված/վերաձևավորված հուշարձանային տարածքները նույնացվում են առօրյա և ծիսականացված գործողությունների հետ (խաղ, զբոսանք, հանգստի կազմակերպում, դպրոցական միջոցառումներ, տոների կազմակերպում և այլն)՝ զարգացնելով սահմանամերձ գյուղի բնակչության լոկալ և ազգային ինքնությունը: Ինքնության նարատիվների ներկայացումը կարևորվում է հատկապես երեխաների/ աշակերտների համար, և այստեղ գտնվող հուշարձանային լանդշաֆտները ընկալվում և ներկայացվում են որպես հուսալի ապագայի կառուցման կարևոր գրավականներ:

Գրականության ցանկ

Աճարկուտն իր գիրկն ընդունեց հերոսացած հայորդուն, հասանելի է՝ https://www.facebook.com/TavushTV/videos/874347963211178:

Արցախյան պատերազմի բոլոր հերոսների հիշատակը հավերժացնող եկեղեցի Աչաջուրի սրտում, օծվեց խաչը և զանգը, հասանելի է՝ https://www.24news.am/news/283760:

ԴԱՆ, Տավուշի մարզ, 2022-2023թթ.:

Կիրանց համայնքում նշվել է գյուղի օրը, հասանելի է՝ https://www.facebook.com/TavushTV/videos/546485179935391:

Հուշարձան՝ Ազգային հերոս Թաթուլ Ղազարյանի և սնքարեցի հերոսների հիշատակին, հասանելի է՝ https://www.aravot.am/2022/02/02/1245046/?fbclid=IwAR0jQvOne3_x_Nmc8Xxe4jnBZkV3llm9ZoamwFdPi3F1uq-VoL3F7hFon1k:

Ձեզ բացակա չենք դնի, հասանելի է՝ http://tavush.mtad.am/news/item/2021/11/07/0711/?fbclid=IwAR3ijTPeKUK2wVP8zGrzwqXXLiv2qGjcd4Eq3yMEwxlFABdliLW5CwlnVos:

Մեզ բացակա չդնեք. Անմահացած տղաներին նվիրված խաչքարի բացում Իջևանի թիվ 5 դպրոցի բակում, հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=xEcmYHEwAQw:

Ի հիշատակ սարիգյուղցիների, ի պատիվ սարիգյուղցի նահատակ հերոս տղերքի, հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=CHHTS8R_rX8:

Connerton P., 1989, How Societies Remember, New York, Cambridge University Press, 121 p.

Osborne B., 2001, Landscapes, Memory, Monuments, and Commemoration: Putting Identity in its Place. Canadian Ethnic Studies; Calgary, 33 (3), pp. 39-77.

Smith A., 1991, National Identity, London: Penguin, 227 p.